ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հուլիսի 2026 թվականի N 0950-Ա

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՉՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԱԵՐՏ ՌԱԴԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՑ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներով, Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 239-րդ, 240-րդ, 241-րդ հոդվածների, 251-րդ հոդվածի 1-ին մասի և 401-րդ հոդվածի 1-ի մասի պահանջներով, որոնց համաձայն փոխադրամիջոցի գույքահարկը համայնքի բյուջե վճարվող տեղական հարկ է, իսկ համայնքը հանդիսանում է փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառող մարմին և իրականացնում է ժամկետանց հարկային պարտավորությունների հավաքագրումը և հարկային վարչարարությունը, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի համապատասխան դրույթներով, հիմք ընդունելով վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների ուսումնասիրությունը, պարզվել է.

Քաղաքացի Լաերտ Ռադիկի Գևորգյանը /ՀԾՀ՝ 2410770417, հասցե՝ Արմավիրի մարզ համայնք Արմավիր գյուղ Սարդարապատ 11 փ. 31տ./ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել փոխադրամիջոցի գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2026 թվականի հուլիսի 20-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածի հիմքով ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանում հարուցվել է վարչական վարույթ և փոխադրամիջոցի գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով 2026 թվականի հուլիսի 29-ին, ժամը 12:00-ին ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում իրականացվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցված Լաերտ Ռադիկի Գևորգյանը չի ներկայացել, ինչպես նաև չի ներկայացրել գրավոր դիրքորոշում՝ /հիմք՝ 21.07.2026թ. թիվ 3067 ծանուցում ուղարկված լինելու փաստը հաստատող անդորրագրի և ծանուցումը ստանալու վերաբերիայլ հետադարձի ծանուցագիրը AL0134542687AM/:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Քաղաքացի Լաերտ Ռադիկի Գևորգյանի անվամբ հաշվառված է CHEVROLET CAMARO 3.6 մակնիշի, 35ZT228 հաշվառման համարանիշի նույնացման համարը՝ 2G1FC1EV2A9196972 (VIN) համարով փոխադրամիջոցը:

Արմավիր համայնքի հաշվառման տվյալների համաձայն՝ նշված փոխադրամիջոցի գույքահարկի գծով առկա են չկատարված հարկային պարտավորություններ, մասնավորապես՝

· 2019-2020 թթ համար ՝ 402956 ՀՀ դրամ, որից ապառք՝ 306000 ՀՀ դրամ, տույժ՝ 96956 ՀՀ դրամ

· 2021-2024թթ համար ՝ 790240 ՀՀ դրամ, որից ապառք՝ 586500 ՀՀ դրամ, տույժ՝ 203740 ՀՀ դրամ:

Փոխադրամիջոցի գույքահարկի գծով Լաերտ Ռադիկի Գևորգյանի ընդհանուր չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 1 193196 (մեկ միլիոն հարյուր իննսուներեք հազար հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ, որից՝ 892 500 (ութ հարյուր իննսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ ապառք, 300 696 (երեք հարյուր հազար վեց հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ՝ տույժ:

Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 251-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները իրենց պետական գրանցման (հաշվառման) վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները: Հաշվառման (գրանցման) վայրի բացակայության դեպքում ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն մասում նշված գումարները վճարում են իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե. Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն հոդվածում նշված գումարները վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Նույն օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ: Ըստ այդ կարգավորումների մինչև 01.01.2018 թվականը հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարել է տույժ՝ 0,15%-ի չափով՝ հարկի գումարի նկատմամբ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավել քան 365 օրվա համար : Այնուհետև 01.01.2018–ից մինչև 21.04.2020 թվականը տույժը հաշվարկվել է 0,075%, բայց ոչ ավելի քան 730 օրվա համար, 21.04.2020 թվականից մինչև 24.10.2024 թվականը կիրառվել է 0,04% ոչ ավել քան 730 օրվա համար: Ներկայումս օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասով տույժի չափը սահմանվել է 0,075% բայց ոչ ավել քան 730 օրվա համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (ՀՕ-491-Ն, ուժի մեջ է մտել 01.01.2003թ., ուժը կորցրել է 01.01.2021թ.) «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով՝

1) մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝
-1-ից 120 ձ.ուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ,
- 121-ից 250 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 300 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար լրացուցիչ՝ 1000 դրամ,
- 251 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 500 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար լրացուցիչ՝ 1000 դրամ:
Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև երեք տարվա վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է 100 տոկոսով: Երեք տարուց ավելի վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկի գումարը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցվում է հարկի գումարի 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան հարկի գումարի 50 տոկոսը: Ընդ որում, վաղեմության ժամկետը որոշելու համար հիմք է ընդունվում ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի թողարկման տարեթիվը:

Պարտավորության նկատմամբ տույժ տուգանքները հաշվարկվել են ըստ ՀՀ Հարկային օրենսգրքի 401–րդ հոդվածի առաջին մասով նախատեսված տոկոսադրույքներով ինչը համակարգը հաշվարկել է ինքնաշխատ եղանակով: Հարկային պարտավորության մեջ չի ներառվում նաև 2025- 2026 թվականների գույքահարկի գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 239-241-րդ, 251-րդ հոդված 1-ին մասի, 401-րդ հոդվածի 1-ի մասի պահանջներով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ, 34-րդ, 58-60-րդ և 88-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով 2026 թվականի հուլիսի 29-ի վարչական վարույթի լսումների ընթացքում կազմված 15/26 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի 11 փողոցի. 31տան բնակիչ Լաերտ Ռադիկի Գևորգյանից /ՀԾՀ՝ 2410770417/ հօգուտ համայնքային բյուջեի գանձել փոխադրամիջոցի գույքահարկի գծով չվճարված հարկային պարտավորությունը՝ ընդհանուր 1 193 196 (մեկ

միլիոն հարյուր իննսուներեք հազար հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ, որից՝ 892 500 (ութ հարյուր իննսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ ապառք, 300 696 (երեք հարյուր հազար վեց հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ՝ տույժ:

2. Գույքահարկը վճարելու հաշվի համարն է՝ **900335231032** (2020թ համար հաշվարկված) ՀՀ Ֆինանսների նախարարություն և **900335007424** (2021-2025թթ համար հաշվարկված):
3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ որոշման ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ՀԿԱԾ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Digitally signed by SARGSYAN VARSHAM 2201890013
Date: 2026.07.31 17:19:05 AMT

2026թ. հուլիսի 29
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հուլիսի 2026 թվականի N 0951-Ա

ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 27-Ն հրամանի 13-րդ, 15-րդ, 18-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.2026 թվականի սեպտեմբերի 1-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ՝

ա) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-7/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարել և անցկացնել 2026 թվականի սեպտեմբերի 1-ին ժամը 10:00-ին, ք. Արմավիր Հանրապետության 32 հասցեում.

բ) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-33/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարել և անցկացնել 2026 թվականի սեպտեմբերի 1-ին ժամը 11:30-ին, ք. Արմավիր Հանրապետության 32 հասցեում:

գ) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-20/ թափուր պաշտոնը

զբաղեցնելու համար մրցույթ հայտարարել և անցկացնել 2026 թվականի սեպտեմբերի 1-ին ժամը 13:00-ին, ք. Արմավիր Հանրապետության 32 հասցեում:

2.Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ Սաթենիկ Մարտիրոսյանին՝ կազմել մրցույթների հայտարարության տեքստերը և հրապարակել azdarar.am ինտերնետային կայքում:

3.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթների հայտարարության տեքստերը՝ համաձայն հավելված 1, 2, 3:

4.Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմին (Լիանա Հայրապետյան)՝ համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթների նախապատրաստական աշխատանքներն իրականացնել «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, հանձնաժողովի աշխատակարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

5.Մրցույթների տեխնիկական սպասարկումն իրականացնելու, հանձնաժողովի աշխատանքների բնականոն ընթացքը և համապատասխան կարգով սահմանված այլ դրույթների իրականացումն ապահովելու նպատակով մրցույթների անցկացման պատասխանատու և համակարգչային աշխատանքների պատասխանատու նշանակել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ Սաթենիկ Մարտիրոսյանին:

6.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

2026թ. հուլիսի 29
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 0952-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 1168-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ինմասի 24-րդկետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերիի 22-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1168-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման գլխագիրը «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ.» կարդալ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
:

2) Որոշման 1-ին կետում «կորիզավորից» բառի փոխարեն կարդալ «վարելահողից» բառերը:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 30
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 0953-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 1173-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ինմասի 24-րդկետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերիի 22-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1173-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման գլխագիրը «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ.» կարդալ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
:

2) Որոշման 1-ին կետում «կորիզավորից» բառի փոխարեն կարդալ «վարելահողից» բառերը:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 30
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 0954-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 1171-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ինմասի 24-րդկետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերիի 22-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1171-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման գլխագիրը «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ.» կարդալ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» :

2) Որոշման 1-ին կետում «վարելահողից» բառի փոխարեն կարդալ «պտղատու այգուց» բառերը:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 30
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 0955-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 1172-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ինմասի 24-րդկետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերիի 22-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1172-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման գլխագիրը «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ.» կարդալ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» :

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 30
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հուլիսի 2026 թվականի N 0956-Ա

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03.06.2026Թ. ՏՐՎԱԾ ԹԻՎ ՆԹ-5842-26 ՆԱԽԱԳԾՄԱՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ԵՎ 14.07.2026Թ ՏՐՎԱԾ ԹԻՎ ՇԹ/341/32056-26 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Աբովյան փողոց 22 հասցեի բնակիչ՝ Սպարտակ Բեգջանի Մինասյանի 22.07.2026թ 4373 դիմումը և տրված թիվ 2597857 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիր համայնքի ղեկավարի 03.06.2026թ. տրված թիվ ՆԹ-5842-26 նախագծման (ճարտարապետահատակագծային առաջադրանք) և 14.07.2026թ տրված թիվ ՇԹ/341/32056-26 թույլտվությունների մեջ կատարել հետևյալ փոփոխությունը «2-րդ կատեգորիա» բառերի փոխարեն կարդալ «3-րդ կատեգորիա» բառերը:

2. Սյուն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 30
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 0957-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ կետերով և 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին» N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ, 4-րդ կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք, Ֆ. Նանսենի փողոց, 27 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են 2001 թվականի մայիսի 15-ից հետո և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2025թ.-ի դեկտեմբերի 12-ի թիվ 150-Ն որոշումը և Զարմանդուխտ Արարատի Սիմոնյանի 04.06.2026 թվականի թիվ 3347 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Զարմանդուխտ Արարատի Սիմոնյանին (ծնվ. 00.00.1957թ.) սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Ֆ. Նանսենի փողոց, 27 հասցեում (վկայական թիվ 11022026-04-0017) 2015 թ. ինքնակամ կառուցված 51,7 քմ ներքին և 59,7 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 2015թ. ինքնակամ կառուցված 0.6 քմ ներքին և 1,4քմ արտաքին մակերեսով զուգարանը ճանաչել օրինական,իսկ 2015թ. ինքնակամ կառուցված 30,6քմ մակերեսով անասնաշենքը համարել ինքնակամ:

2. Ընդունել ի գիտություն , որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Զարմանդուխտ Արարատի Սիմոնյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում գտնվող գույքին (վկայական թիվ 11022026-04-0017) տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, քաղաք Արմավիր, Ֆ. Նանսենի փողոց, 27 բնակելի տուն:

3.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված ընդհանուր արտաքին 61.1քմ մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 1209 ՀՀ դրամ ընդհանուր՝ 73870/յոթանասուներեք հազար ութ հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ :

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր,Ֆ. Նանսենի փողոց, 27 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2026ANEVME:

7. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 30

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հուլիսի 2026 թվականի N 0958-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արմավիր համայնքին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող 04-043-0453-0019 կադաստրային ծածկագրից հողամասին տալ հասցե ՝ Հայաստանի Հանրապետութան Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Մայիսյան,1-ին փողոց, 59/4 հողամաս:

2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 30
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 0959-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով,որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի 04-001-0317- կադաստրային ծածկագրից հողամասում գտնվող 109,0 քմ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում Հայաստան Մյասնիկի Պողոսյանի կողմից կառուցված 7,4 քմ ներքին և 10,82 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի և 5,1 քմ ներքին և 6,56 քմ արտաքին մակերեսով անասնաշենքի տարածքների ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նկատի ունենալով,որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցը համապատասխանում է հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին,ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասով, 188-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանդրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի հ. 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 34-րդ կետով, 35-րդ կետի «բ» ենթակետով, 35.1-րդ,36-րդ կետերով, ՀՀ Կառավարության 2011 թվականի թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հիմք ընդունելով կառույցն ինքնակամ իրականացրած ֆիզիկական անձ Հայաստան Մյասնիկի Պողոսյանի 19.06.2026թ. թիվ 3671 դիմումը և դրան կից ներկայացրած փաստաթղթերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի 107-րդ թաղամաս, 193 բնակելի տան

հասցեին կից գտնվող 109,0 քմ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված՝ ավտոտնակը՝ 7,4 քմ ներքին և 10,82 քմ արտաքին մակերեսով և անասնաշենքը՝ 5,1 քմ ներքին և 6,56 քմ արտաքին մակերեսով /ստորև նաև գույք/, համարել Արմավիր համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական /կցվում է հողամասի հատակագիծն ու շինության բնութագիրը/:

2. Գույքի նկատմամբ պետական գրանցում կատարելուց հետո գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով ձեռք բերելու առաջարկ կատարել կառույցն իրականացրած Հայաստան Մյասնիկի Պողոսյանին:

3. Արմավիր համայնքին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում գտնվող 04-001-0317- կադաստրային ծածկագրից գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, Արմավիր քաղաք, 107-րդ թաղամաս, 193/1 շինություն:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր, քաղաք, 107-րդ թաղամաս, 193/1 հասցեում գտնվող գույքի հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2026LGPJ3G:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 30
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 0960-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԱՎԵԼ ՀՈՂ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ կետերով և 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին» N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ, 4-րդ կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի գյուղ Արաքս, 3-րդ թաղամասի 1-ին փողոց, 2/3 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են 2001 թվականի մայիսի 15-ից հետո և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2025թ.-ի դեկտեմբերի 12-ի թիվ 150-Ն որոշումը և Քանաքարա Վահանի Սահակյանի 23.06.2026 թվականի թիվ 3738 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քանաքարա Վահանի Սահակյանին (ծնվ. 13/10/1974թ.), Մկրտիչ Վոլոդյայի Պողոսյանին (ծնվ. 29/06/1962թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-016-0027-0004 կադաստրային ծածկագրով 1200,0 քմ մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 47,0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան՝ սեփականության իրավունքով:

2.Քանաքարա Վահանի Սահակյանին (ծնվ. 13/10/1974թ.), Մկրտիչ Վոլոդյայի Պողոսյանին (ծնվ. 29/06/1962թ.) պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-016-0027-0004 կադաստրային ծածկագրովում 1998 թ. ինքնակամ կառուցված 143,1 քմ ներքին և 171,3 քմ արտաքին մակերեսով անավարտ բնակելի տունը և 1998 թ. ինքնակամ կառուցված 42,3 քմ ներքին և 50,4 քմ արտաքին մակերեսով նկուղը ճանաչել օրինական:

3.ՀՀ Կառավարության 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում

4. Ընդունել ի գիտություն , որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Գույքին տրամադրելՀայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ,Արմավիր համայնք գյուղ Արաքս, 3-րդ թաղամասի 1-ին փողոց, 2/3 կիսանկուղ:

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Արաքս, 3-րդ թաղամասի 1-ին փողոց, 2/3 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 20263PQYTU:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

8. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 30
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հուլիսի 2026 թվականի N 0961-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 16-ի թիվ 095-Ա որոշումը, քաղաքացի Արամ Ալբերտի Պողոսյանի 2026 թվականի հունիսի 12-ի թիվ 3540 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում գտնվող Արամ Ալբերտի Պողոսյանի սեփականություն հանդիսացող 04-001-0267-0017 կադաստրային ծածկագրով 0.0561 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասից՝ 0,00217 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրերի բնակելի կառուցապատումից՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման :

2.Կատարել համապատասխան փոփոխություն՝ Հայաստանի Հանարպետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի «Արմավիր-3» համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 30
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 0962-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ կետերով և 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին» N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ, 4-րդ կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք, Խ.Աբովյան փողոց, 11 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են 2001 թվականի մայիսի 15-ը հետո և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2025թ.-ի դեկտեմբերի 12-ի թիվ 150-Ն որոշումը և Անահիտ Վարուժանի Կարապետյանի լիազորված անձ՝ Իրինա Հրաչյայի Մանուչարյանի 07.07.2026 թվականի թիվ 4048 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անահիտ Վարուժանի Կարապետյանին (ծնվ. 01.09.1962թ.) պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր, Խ.Աբովյան փողոց, 11 հասցեում (վկայական թիվ՝ 23062026-04-0012) 2020 թ. ինքնակամ կառուցված 3,5 քմ մակերեսով բնակելի տուն նկուղի աստիճանահարթակը, 2020թ. կառուցված 13,3 քմ ներքին և 21,5քմ արտաքին մակերեսով բնակելի տան մի մասը, 2020թ. կառուցված 10,4 քմ ներքին և 13,1 քմ արտաքին մակերեսով թռչնանոցը, 2020թ. կառուցված 12.9 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական, իսկ 2022թ. կառուցված 17,4 քմ ներքին մակերեսով տաղավարը և 2022թ. կառուցված 59,7 քմ մակերեսով ծածկը համարել ինքնակամ :

2. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված ընդհանուր արտաքին 51.0 քմ մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 1673 ՀՀ դրամ ընդհանուր՝ 85323 /ութսուն հինգ հազար երեք հարյուր քսաներեք/ ՀՀ դրամ:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք, Խ.Աբովյան փողոց, 11 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2026EY3G2K:

5. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 30
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հուլիսի 2026 թվականի N 0963-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-Ի ԹԻՎ 434-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿՆՔՎԱԾ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի քաղաքային համայնքի ղեկավարի 2011 թվականի հուլիսի 26-ի թիվ 434-Ա որոշման համաձայն Արմավիր քաղաքի Հանրապետության փողոց 35 շենքի թիվ 3 ավտոտնակ ժամանակավոր հասցեում տեղադրված ոչ հիմնական շինության (ավտոտնակի) զբաղեցրած 20,0 քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով 5 տարի ժամկետով հատկացվել է քաղաքացի Սաթիկ Իսահակյանին, համաձայն որի Արմավիրի քաղաքային համայնքի և Սաթիկ Իսահակյանի միջև 2011 թվականի օգոստոսի 11-ին կնքվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր /գրանցված սեղ.նո 5072/:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ հոդվածների 1-ին մասերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Սաթիկ Իսահակյանի 2026 թվականի հուլիսի 17-ի թիվ 4283 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի քաղաքային համայնքի ղեկավարի 2011 թվականի հուլիսի 26-ի թիվ 434-Ա որոշման համաձայն Արմավիր քաղաքի Հանրապետության փողոց 35 շենքի թիվ 3 ավտոտնակ ժամանակավոր հասցեում տեղադրված ոչ հիմնական շինության (ավտոտնակի) զբաղեցրած 20,0 քմ մակերեսով հողամասը հետ վերցնել Արմավիր համայնքի տնօրինության տակ:
2. Ուժը կորցրած ճանաչել Արմավիրի քաղաքային համայնքի ղեկավարի 2011 թվականի հուլիսի 26-ի թիվ 434-Ա որոշումը և դրա հիման վրա կնքված՝ 2011 թվականի օգոստոսի 11-ին

կնքված՝ /գրանցված սեղ. նո.5072/ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիրը լուծել:

3. Սույն որոշմամբ դադարող գույքային իրավունքը ենթակա է իրավունքի պետական դադարման գրանցման՝ Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 31
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հուլիսի 2026 թվականի N 0964-Ա

ԳԵՂԱՄ ԿԱՐԱՊԵՏԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ՝ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱ՝ ԷԼԻԶԱ ԳԵՂԱՄԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացի Գեղամ Կարապետի Սահակյանի 2026 թվականի հուլիսի 20-ի թիվ 4332 դիմումը և Արմավիր համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2026 թվականի հուլիսի 30-ի թիվ 11 նիստի արձանագրությամբ տրված դրական եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Թույլատրել քաղաքացի Գեղամ Կարապետի Սահակյանին /ծնված՝ 08.12.1979թ./ օտարելու իր անչափահաս երեխա՝ Էլիզա Գեղամի Սահակյանին /ծնված՝ 18.08.2010թ./ սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 10072019-04-0027 վկայական/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի, Շահումյան փողոց 11/1 շենք, թիվ 9 բնակարանը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 31
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիսի 2026 թվականի N 0965-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔ ԱՐՄԱՎԻՐ, Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ, 36 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՂԱՎՆԻ ԳԱԼՈՒՍՏԻ ԱԴԱՄՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-ԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ 0914-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր, Ա. Իսահակյան փողոց, 36 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2025թ.-ի դեկտեմբերի 12-ի թիվ 150-Ն որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի

30.06.2026 թվականի վկայագիրը և Աղավնի Գալուստի Ադամյանի լիազորված անձ Հարություն Մանուկի Մարգարյանի 30.07.2026 թվականի թիվ 4560 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Աղավնի Գալուստի Ադամյանին (ծնվ. 08/12/1961թ.) պատկանող իրավունքները Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր, 04-001-0162-0005 կադաստրային ծածկագրում գտնվող 0.06 հա օրինական հողամասի վրա 1950թ. կառուցված 69,3 քմ մակերեսով խորդանոցի և 1985թ. կառուցված 12,7 քմ մակերեսով օժանդակ շինության նկատմամբ:
2. Ընդունել ի գիտություն, որ
   1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Աղավնի Գալուստի Ադամյանին պատկանող 04-001-0162-0005 կադաստրային ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք, քաղաք Արմավիր, Ա. Իսահակյան փողոց, 36 շինություն:
4. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրած հասցեն ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 21-ի թիվ 0914-Ա որոշումը:
7. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:
8. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 31
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 0966Ա

ՄԵՐԻ ՎԱՆԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հանրապետության փողոցի 20 հասցում առանց համապատասխան հողօգտագործման իրավունքի շվաքարան տեղադրելու փաստի վերաբերյալ, պարզեց, որ.

Մերի Վանիկի Հովհաննիսյանը խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանած պահանջները՝ առանց համապատասխան հողօգտագործման իրավունքի տեղադրել է շվաքարան, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքի ղեկավարի օգնական Արմեն Աբգարյանի 07.07.2026թ. թիվ 4059 զեկուցագրի հիման վրա 2026 թվականի հուլիսի 7-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Արմավիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի հուլիսի 21-ին նշանակվել է վարչական վարույթի նիստ, որի մասին ծանուցումը իրավախախտման մեջ կասկածվող Մերի Վանիկի Հովհաննիսյանին հանձնվել է փոստային առաքման եղանակով,սակայն իրավախախտման մեջ կասկածվող Մերի Վանիկի Հովհաննիսյանը չի ներայացել նիստին: / LO134372372 AM ստացականը/

Վարչական հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարաության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1-րդ հոդվածով նշանակել է վարչական հանձնաժողովի նիստի նոր օր՝ ծանուցումը հրապարակելով Հայաստանի

Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում /azdarar.am/,ինչպես նաև փոստային առաքմամբ ուղարկել է իրավախախտման մեջ կասկածվող Մերի Վանիկի Հովհաննիսյանի գտնվելու վայրի հասցեով:Իրավախախտման մեջ կասկածվող Մերի Վանիկի Հովհաննիսյանը, պատշաճ ծանուցված լինելով վարչական հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, վայրի մասին ներկայացել է վարչական հանձնաժողովի նիստին :

Նիստին ներկա Մերի Վանիկի Հովհաննիսյանը հայտնել է, որ վերացրել է իրավախախտման հետևանքները՝ ներկայացնելով լուսանկարներ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքի ղեկավարի օգնականի կողմից «Վարչական իրավախախտում հայտնաբերելու մասին» 06.07.2026թ. թիվ 15 արձանագրության հիման վրա 07.07.2026թ. կազմված թիվ 4059 զեկուցագիրը:

Արմավիր համայնքի վարչական սահմաններում ապօրինի հողօգտագործումները կանխարգելելու նպատակով հերթական ուսումնասիրության /շրջայցի/ ժամանակ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի աշխատակիցների կողմից Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հանրապետության փողոց 20 հասցեում առանց համապատասխան հողօգտագործման իրավունքի շվաքարան տեղադրելու մասին 06.07.2026թ. կազմված արձանագրությունը:

Վարչական հանձնաժողովի 2026 թվականի հուլիսի 31-ի թիվ 17/26 արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Մերի Վանիկի Հովհաննիսյանը հայտնել է, որ վերացրել է իրավախախտման հետևանքները՝ ներկայացնելով լուսանկարներ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու

ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա)կետով և հիմք ընդունելով Արմավիրի համայնքապետարանի վարչական հանձնաժողով 31.07.2026 թվականի թիվ 17/26 արձանագրությունը.

Որոշում եմ՝

1. Մերի Վանիկի Հովհաննիսյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով հարուցված վարչական վարույթը կարճել:

2.Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մերի Վանիկի Հովհաննիսյանին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 31
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2026 թվականի N 0967-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ կետերով և 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին» N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ, 4-րդ կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի գյուղ Մայիսյան, 1-ին փողոց 47/1 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են 2001 թվականի մայիսի 15-ը հետո և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2025թ.-ի դեկտեմբերի 12-ի թիվ 150-Ն որոշումը և Խաչիկ Անդրանիկի Մովսիսյանի 13.07.2026 թվականի թիվ 4145 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Խաչիկ Անդրանիկի Մովսիսյանին (ծնվ. 23.12.1977թ.) պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Մայիսյան, 1-ին փողոց 47/1 հասցեում (վկայական թիվ 06022018-04-0048) 2018 թ. ինքնակամ

կառուցված 45 քմ ներքին և 49.0 քմ արտաքին մակերեսով խանութը և ծածկը ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն , որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված ընդհանուր արտաքին 49 քմ մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով՝ 2418 ՀՀ դրամ ընդհանուր՝ 118482 /հարյուր տասնութ հազար չորս հարյուր ութսուներկու/ ՀՀ դրամ:

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Մայիսյան, 1-ին փողոց 47/1 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2026GMWWT4:

7. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 31
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0968-Ա

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքի առկայությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
Ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	Համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ԱՔ-ԳՀԱՊՁԲ-26/36	2	Արևային ֆոտովոլտային համակարգ 2	2200000	«ԷԼ ՍՈԼ ԻՆՆՈՎԵՅՇՆ» ՍՊԸ	09432441	ք. Երևան, Լուկաշինի 43/84	23.07.2026թ.	Արմավիրի համայնքապետարան	ԱՔ-ԳՀԱՊՁԲ-26/36 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.14 կետ (հրավերով սահմանված ժամկետում ամբողջական չի շտկել հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները)	Առկա չէ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 03
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 0969-Ա

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքի առկայությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
Ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	Համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ԱՔ-ԳՀԱՊՁԲ-26/36	1	Արևային ֆոտովոլտային համակարգ 1	2200000	«Ֆասթ Էներջի սիսթեմս» ՍՊԸ	00926595	ք. Երևան, Կենտրոն Նար-Դոս փ., 71 2-րդ հարկ	23.07.2026թ.	Արմավիրի համայնքապետարան	ԱՔ-ԳՀԱՊՁԲ-26/36 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.14 կետ (հրավերով սահմանված ժամկետում ամբողջական չի շտկել հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները)	Առկա չէ
	2	Արևային ֆոտովոլտային համակարգ 2	2200000							

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 03
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 օգոստոսի 2026 թվականի N 0970-Ա

ԱՐԱՅԻԿ ՄԱՐԱՏԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ, ԱՆԱՀԻՏ ՀԱՄԼԵՏԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ, ՍՈՆԱ ԱՐԱՅԻԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԵՎ ՏԱԹԵՎԻԿ ԱՐԱՅԻԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2025թ. դեկտեմբերի 12-ի թիվ 150-Ն որոշումը, Արայիկ Մարատի Դավթյանի 30.07.2026թ. թիվ 4563 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արայիկ Մարատի Դավթյանին (ծնվ. 13.11.1960թ.), Անահիտ Համլետի Դանիելյանին (ծնվ. 24.02.1964թ.), Սոնա Արայիկի Դավթյանին (ծնվ. 23.11.1988թ.) և Տաթևիկ Արայիկի Դավթյանին (ծնվ. 23.08.1990թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղում գտնվող գույքին (կադաստրային ծածկագիր թիվ՝ 04-059-0130-0011) տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Սարդարապատ, 29-րդ փողոց, 47 հողամաս:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրած հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ.ՄԱՐԳՍՅԱՆ**

2026թ. օգոստոսի 04
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 օգոստոսի 2026 թվականի N 0971-Ա

ԳՈՀԱՐ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոհար Պողոսյանի 2026 թվականի օգոստոսի 05-ի թիվ 4678 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոհար Պողոսյանին տրամադրել չվճարվող արձակուրդ 13 օրացուցային օր՝ 2026 թվականի օգոստոսի 5-ից օգոստոսի 17-ը ներառյալ:
2.Գոհար Պողոսյանին՝ աշխատանքի ներկայանալ 2026 թվականի օգոստոսի 18-ին:
3.Նշված ժամանակահատվածում «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոհար Պողոսյանի պարտականությունները վերապահել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վոկալի դասատու Արմեն Ավետիսյանին:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 05
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 օգոստոսի 2026 թվականի N 0972-Ա

ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1599-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աննա Գևորգյանի 2026 թվականի օգոստոսի 05-ի թիվ 4679 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աննա Գևորգյանին տրամադրել 2026 թվականի ամենամյա արձակուրդի 5 աշխատանքային օրերը՝ 2026 թվականի օգոստոսի 10-ից (25.04.2026թ-25.04.2027թ. ժամանակահատվածի համար):
2.Աննա Գևորգյանին՝ աշխատանքի ներկայանալ 2026 թվականի օգոստոսի 17-ին:
3.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աննա Գևորգյանի պարտականությունները վերապահել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստ՝ ուսումնական գծով տնօրենի տեղակալ Էմմա Սողոմոնյանին:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. օգոստոսի 05
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 Օգոստոսի 2026 թվականի N 0973-Ա

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 31-ի «Արմավիր համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) կարգ ու պայմանները հաստատելու մասին» թիվ 57-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 12-ի «Արմավիր համայնքում տեղական տուրքերի և վճարների 2026 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 150-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ա/Ձ Մուշեղ Խաչատրյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Բավարարել Մուշեղ Խաչատրյանի դիմումը և թույլատրել քաղաք Արմավիր, Արարատյան փողոց, 5/44 հասցեում գտնվող տարածքում արտաքին գովազդ տեղադրելը:

2.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Մուշեղ Խաչատրյանին տալու համապատասխան թույլտվություն:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. օգոստոսի 05
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 օգոստոսի 2026 թվականի N 0974-Ա

ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳԻ ՄՀԵՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ԱՎԵԼ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2025թ. դեկտեմբերի 12-ի թիվ 150-Ն որոշումը և Օֆելյա Գևորգի Մհերյանի լիազորված անձ Լուսինե Գևորգի Մհերյանի 17.07.2026թ. թիվ 4290 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օֆելյա Գևորգի Մհերյանին (ծնվ. 21/11/1974թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում գտնվող 04-001-0151-0016 կադաստրային ծածկագրով 0,0400 քմ մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 16,0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան՝ սեփականության իրավունքով:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. օգոստոսի 05
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 օգոստոսի 2026 թվականի N 0975-Ա

ՀԱՍՄԻԿ ԶԱՎԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2025թ. դեկտեմբերի 12-ի թիվ 150-Ն որոշումը, Հասմիկ Զավենի Սարգսյանի 22.07.2026թ. թիվ 4384 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հասմիկ Զավենի Սարգսյանին (ծնվ. 24. 01. 1954թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում գտնվող գույքին (կադաստրային ծածկագիր թիվ՝ 04-001-0574-0117) տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, քաղաք Արմավիր, Անտառուտ այգեգործական թաղամաս, 117 հողամաս:
2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրած հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ.ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. օգոստոսի 05
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 Օգոստոսի 2026 թվականի N 0976-Ա

ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 150-Ն որոշումը և Ա/Ձ Լևոն Մկրտչյանի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Բավարարել Ա/Ձ Լևոն Մկրտչյանի հայտը և թույլատրել քաղաք Արմավիր, Երևանյան փողոց, 4/19 հասցեում գտնվող ոչ հիմնական շինությունում զբաղվելու ծխախոտի արտադրատեսակների վաճառքով:

2.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Լևոն Մկրտչյանին տալու համապատասխան թույլտվություն:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. օգոստոսի 05
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 Օգոստոսի 2026 թվականի N 0977-Ա

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 31-ի «Արմավիր համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) կարգ ու պայմանները հաստատելու մասին» թիվ 57-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 12-ի «Արմավիր համայնքում տեղական տուրքերի և վճարների 2026 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 150-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ա/Ձ Մերի Գալստյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Բավարարել Մերի Գալստյանի դիմումը և թույլատրել քաղաք Արմավիր, Բաղրամյան փողոց, 4/1 շինություն հասցեում գտնվող տարածքում արտաքին գովազդ տեղադրելը:

2.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Մերի Գալստյանին տալու համապատասխան թույլտվություն:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. օգոստոսի 06
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 Օգոստոսի 2026 թվականի N 0978-Ա

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 31-ի «Արմավիր համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) կարգ ու պայմանները հաստատելու մասին» թիվ 57-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 12-ի «Արմավիր համայնքում տեղական տուրքերի և վճարների 2026 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 150-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ա/Ձ Արմինե Հովհաննիսյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Բավարարել Արմինե Հովհաննիսյանի դիմումը և թույլատրել քաղաք Արմավիր, Բաղրամյան փողոց, 8/6 հասցեում գտնվող տարածքում արտաքին գովազդ տեղադրելը:

2.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Արմինե Հովհաննիսյանին տալու համապատասխան թույլտվություն:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. օգոստոսի 06
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 օգոստոսի 2026 թվականի N 0979-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ կետերով և 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին» N600-Ն որոշման 2-րդ հավելվածով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր, Հանրապետության փողոց,14 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են 2001 թվականի մայիսի 15-ը հետո և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2025թ.-ի դեկտեմբերի 12-ի թիվ 150-Ն որոշումը և Ալբերտ Եփրեմյանի 29.07.2026 թվականի թիվ 4510 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ավետիք Գրիգորի Հովհաննիսյանին (ծնվ. 17.03.1969թ.),Վաչիկ Մարգարի Վարդանյանին (ծնվ. 25.08.1979թ.),Շմավոն Մնացականի Եփրեմյանին (ծնվ. 18.01.1978թ.),Ալբերտ Մնացականի Եփրեմյանին (ծնվ. 04.03.1979թ.) և Սուրեն Վահանի Կարապետյանին (ծնվ. 30.12.1974թ.) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր, Հանրապետության փողո 14 հասցեում (վկայական թիվ 11072023-04-0097) 2010թ. ինքնակամ

կառուցված 13,6 քմ ներքին և 15,37քմ արտաքին մակերեսով հասարակական տարածքը ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն , որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված ընդհանուր արտաքին 13,6 քմ մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով՝ 4632 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 71194 /յոթանասունմեկ հազար հարյուր իննսունչորս/ ՀՀ դրամ:

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր, Հանրապետության փողո 14 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 20268XQRYJ:

7. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2026թ. օգոստոսի 06
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2026 թվականի N 0980-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ կետերով և 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին» N600-Ն որոշման 2-րդ հավելվածով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր, Հանրապետության փողոց,14 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են 2001 թվականի մայիսի 15-ը հետո և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2025թ.-ի դեկտեմբերի 12-ի թիվ 150-Ն որոշումը և Շմավոն Եփրեմյանի 29.07.2026 թվականի թիվ 4506 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

